Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ <<ՀՀ Արարատի մարզի Դվինի Լ.Ազգալդյանի անվան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի ֆիզիկայի ուսուցչի /21 դասաժամ/, ֆիզկուլտուրայի ուսուցչի /12 դասաժամ/, ռուսաց լեզվի ուսուցչի /10 դասաժամ/, տեխնոլոգիա ուսուցչի /14 դասաժամ/ թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1) ,մեկ լուսանկար 3×4 չափի
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- << Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ- ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 5 –ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14 : 00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 7 -ին՝ ժամը 14 :00-ին, Արարատի մարզի Դվինի Լ.Ազգալդյանի անվան միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Օրբելի 14:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 077-02-29-82 հեռախոսահամարով: